ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԹԻՎ 3

2018 թվականի ապրիլի 26-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 11ա դասարանի դասարանական և ծնողական համատեղ ժողովը:

Ժողովին ներկա էին բոլոր աշակերտները և ծնողները:

Ժողովը վարում էր դասղեկ Նարե Հովհաննիսյանը:

Ներկա էին նաև քիմիայի ու ինֆորմատիկայի ուսուցչուհիներ Լուիզա Աղաքարյանն ու Թամարա Սամսոնյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

ա) ուսման առաջադիմությունը

բ) դասագրքերի և աշխատանքային տետրերի վիճակը

գ) համազգեստը և նրա պահպանումը

դ) դասարանի սանիտարական վիճակը և գույքի պահպանումը

ե) հաճախումների արդյունքները

Լսեցին՝

Ելույթ ունեցավ դասղեկ Նարե Հովհաննիսյանը. նա ամփոփ ներկայացրեց դասարանի աշակերտների դասալրոցեսին պատրաստվածությանը: Հատուկ անդրադարձ կատարվեց բացակայության հարցին:

Աշակերտների բացակայությունը կազմում է մեծ թիվ: 2 աշակերտ՝ Բարիկ Ավետիսյանի և Անդրանիկ Գրիգորյանի բացակայության թիվը կազմում է դասարանի բացակայող աշակերտների թվի մեծ մասը: Նրանց ծնողների հետ կատարվեց հատուկ աշխատանք, որպեսզի նրանք տեղյակ լինեն իրենց երեխաների բացակայության մասին: Ծանոթացրեց սովորողների փոխադրման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան փոխադրվելու կարգին: Մայիսի 15-ի դրությամբ կազմվելու է աշակերտների բացակայությունների մասին տեղեկանք:

Անհանգստացնող է այն փաստը, որ դասարանում կան մեծ թվով բացակայություն ունեցող աշակերտներ, որոնք կարող են հատել սահմանված, թույլատրելի բացակայության շեմը: Օրակարգային հարց է նաև անհատական պարապմունքների հաճախող երեխաների հարցը՝ կապված դասերին ոչ լիարժեք պատրատվածության, հաճախակի բացակայությունների հետ:

Դասղեկը հետևողական է եղել հերթապահության, հաճախումների, դասագրքերի և աշխատանքային տետրերի վիճակի ստուգման, համազգեստի, նրա պահպանման, ինչպես նաև դասարանի սանիտարական

վիճակի ու գույքի պահպանման հարցում: Պատժվել են նրանք, ովքեր կատարելեն կարգապահական շեղումներ, փորձել են խանգարել կամ լքել դասերը:
Անմիջապես տեղեկացվել է ծնողներին ամեն ինչի մասին և դասղեկ-ծնող համատեղ ջանքերով փորձել են՝ հարթել ծագած խնդիրները:

Լսեցին նաև ծնողների ելույթները.

Ելույթ ունեցավ Հռիփսիմե Ավետիսյանը որդու՝ Բորիկ Ավետիսյանի բացակայության վերաբերյալ: Եվ նշեց, որ ավելի հետևողական կլինի նրա հաճախումներին:
Մի քանի ծնողի հետ եկանք համաձայնության՝

Ա. Հաճախակի լինել դպրոցում, կատարել դասալսումներ, հետևել և օգնել աշակերտներին ամեն հարցում:

Բ. Ստուգել երեխայի ամենօրյա դասապատրաստումները (տնային և գործնական աշխատանքների կատարում, օրագրի լրացում և այլն):

Գ. Ապահովել դասաժամերին երեխաների լիարժեք ներկայությունը:

Քննարկվեցին նաև ընթացիկ հարցեր՝ կապված աշակերտների կուլտուրական մակարդակի բարձրացման, գիտելիքների զարգացման և այլ խնդիրների լուծման:

Բոլորն էլ հավաստեցին, որ սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում մեծ է ծնողների դերը երեխային ուսման մեջ աջակցելու և դպրոցից դուրս նրա օրվա մնացած ժամերի զբաղվածությունը ճիշտ կազմակերպելու հարցում, որովհետև նրանց ամենօրյա անմիջական հսկողությունից և ծնողական պարտքի զգացումից է կախված աշակերտի ուսման նկատմամբ պատասխանատվությունը, օրվա ռեժիմի ճիշտ կարգավորելը: Պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության և ուսման հիմնախնդիրների լուծման հարցում:

Այս տարիքի երեխաների հետ տարվող աշխատանքում ավելի շատ հայրերը պետք է հետաքրքրվեն ու զբաղվեն

Դասղեկը հորդորեց ծնողներին ճիշտ կազմակերպել երեխաների և՛ ազատ ժամանակի տնօրինումը, և՛ դասապատրաստման գործը. չէ՞ որ այդ ամբողջ ժամանակահատվածում նրանք գտնվում են ծնողների կողքին ու նրանց հսկողության տակ:

Ելույթ ունեցան նաև աշակերտները և խոսեցին իրենց հուզող հարցերի մասին:

Ժողովի նախագահ՝ ..... Կարինե Շահնազարյան

Քարտուղար՝ ..... Քրիստինե Մխիթարյան